

ՄԻ ԷՁ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Վրացական ՍՍՀ պետական պատմական արխիվի № 11 ֆոնդի 66-րդ գործը մի լղարիկ թղթապանակ է՝ բաղկացած հինգ թերթից. այն վերնադրված է «Ռզվանի ուսուցիչ Պետրոս հաղարովի խնդրագիրը, կից ներկայացված եզրի Միրզա աղայի նամակը՝ աչքի դեղ ուղարկելու մասին»։ Գործը կազմակերպված է 1831 թ. հունվարի 2-ը, իսկ ավարտը՝ 1831 թ. հունվարի 30-ը¹։ Այստեղ պահպանվում են շորս փաստաթղթեր. Ռնդվան քաղաքի ուսուցիչ Պետրոս հաղարովի խնդրագիրը Կովկասյան առանձին կորպուսի գլխավոր հրամանատար գեներալ-ֆելդմարշալ կոմս Պասկևիչին, գրված ուսերեն լեզվով՝ 22 դեկտեմբերի, 1830 թ.։ Միրզա աղայի նամակը կոմս Պասկևիչին, հայերեն լեզվով՝ 22 մայիսի 1830 թ.։ Երրորդ փաստաթուղթը այդ նամակի ուսերեն թարգմանությունն է, իսկ չորրորդը՝ ուսերեն մի վկայագիր՝ տրված Պետրոս հաղարովին, 30-ը հունվարի 1831 թ.։

Պետրոս հաղարովի խնդրագիրը և Միրզա աղայի նամակի ուսերեն թարգմանությունը դեռևս անցյալ դարի կեսերին արժանացել են «АКТЫ» հանրահայտ փաստաթղթերի բաղմահատոր ժողովածուն կազմողների ուշադրությանը և գետեղվել 7-րդ հատորում²։ Այնուհետև այդ փաստաթղթերը ի թիվս ուրիշ փաստաթղթերի հրապարակվել են 1900 թ. Պ. Ի. Ավերյանովի «Քրդերը Պարսկաստանի ու Թուրքիայի հետ XIX դարում Ռուսաստանի վարած պատերազմների ընթացքում» գրքի հավելվածում³։

Ո՞վ էր Միրզա աղան և ի՞նչ պատմական արժեք ունեն հիշյալ փաստաթղթերը հարցերը մինչև օրս չեն դարձել քրդագետների ուսումնասիրության առարկան⁴։ Մինչդեռ եզրի Միրզա աղայի գործունեությունը, մասնավորապես նրա մղած հակաթուրքական ազատագրական պայքարը, ռուսասիրական տրամադրությունը, ինչպես նաև դեպի հարևան հայ ժողովուրդը նրա ունեցած բարեկամական վերաբերմունքը ներկայաց-

նում են որոշակի հետաքրքրություն: Միրզա աղայի գործունեության ուսումնասիրությունը ուշագրավ է նաև այն տեսակետից, որ մինչև օրս քուրդ ժողովրդի եզդի հատվածը բանահյուսության իր հարուստ գանձարանում շարունակում է սիրով ու գորովանքով պահել Շեյխ Միրզայի (նույն Միրզա աղան) և նրա զինակիցների՝ Քյաշիշ Պոլոյի (նույն Քահանա Պոդոսը) ու շեյխ Մճոյի շուրջը հյուսած երգերի մի ամբողջ շարք: Այսպիսով, հարցի գիտական դիտարկումը ձեռք է բերում կարևորություն ինչպես պատմական, այնպես էլ բանասիրական առումով:

* * *

XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին Թուրքիայի ու Պարսկաստանի հետ Ռուսաստանի վարած պատերազմները բաղնայան և անդրկովկասյան ժողովուրդների համար ունեցան շրջադարձային նշանակություն: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մըտնելը ցնծությամբ ընդունվեց հայ ժողովրդի՝ պարսկական լծից ազատագրված հատվածի կողմից: Ազատագրության իր հույսերը Ռուսաստանի հետ էր կապում նաև Արևմտյան Հայաստանի ազգաբնակչությունը: Այդ էր պատճառը, որ 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ արևմտահայությունը իր գործուն մասնակցությունն էր հանդես բերում ռազմական թատերաբեմում հօգուտ ռուսական զենքի հաղթանակի:

Պատերազմական գործողությունների գոտուց հեռու հայկական համայնքները ևս իրենց դրկից եզդի-քրդերի հետ միասին ուղիներ են փնտրել կապեր հաստատելու ռուսական գործող բանակի հրամանատարության հետ: XIX դարի առաջին կեսին Սղերդի շրջանի եզդի-քրդերի առաջնորդ Շեյխ Միրզայի հակաթուրքական ապստամբության ու նրա ռուսասիրական ձգտումների մասին կովկասյան փոխարքայության դիվանագիտական գրասենյակի թղթապանակներից մեկում հայտնվեցին փաստաթղթեր, որոնք հաստատում էին քուրդ իշխանի՝ Կովկասում ռուսական ադմինիստրացիայի հետ կապեր հաստատելու փորձերի մասին: Սղերդը որպես սանջակ մտնում էր Բիթլիսի վիլայեթի մեջ: Սանջակը բաղկացած էր յոթը ղազաններից՝ Սղերդի, Ռնդվանի, Շիրվանի, էրուների, Խատի, Բերվարի և Հազոյի: Սղերդի սանջակը թուրքական իշխանությանը ենթարկվում էր ձևականորեն, փաստորեն տեղի ժողովուրդը ղեկավարվում էր կիսանկախ համայնքների առաջնորդների կողմից: Այստեղի բնակչության մեծամասնությունը եզդի-քրդեր, հայեր, ասորիներ

էին, որոնց վրա մեծ էր Ռնդվան քաղաքի եզդի իշխան Շեյխ Միրզայի ազդեցութիւնը: Միայն Ռնդվանի (նաև Ռողովան, Ռդվան) ղազան ունէր 111 գյուղ⁵:

Ռնդվան քաղաքը գտնվում էր Տիգրիս գետի ձախ ափին, Սղերդից 32 կմ հեռավորութեամբ: Քաղաքը շրջափակված է եղել Զինգանի և Դուրդիլանի վեհաշուք լեռներով: Քաղաքի անունը ժողովրդական ստուգաբանութեամբ քրդական ծագում ունի և նշանակում է գեղեցիկ վայր, որ՝ Եվրոպայի ճանապարհորդների վկայութեամբ, լրիվ համապատասխանել է տեղանքի գեղեցկութեանն ու հմայքին: Քաղաքում պահպանված հրենագույն շինութիւնների ավերակները վկայել են նրա, որպես բնակավայրի, գոյութեան վաղեմիութիւնը: Ականատեսները նշել են, որ մինչև XIX դարի սկզբները քաղաքում պահպանվել էին անտիկ շրջանից մնացած սալահատակված փողոցները: Քաղաքամերձ բարձունքներից մեկի լանջին, հին շինութեան փլատակների վրա կառուցված է եղել Շեյխ Միրզայի ամրոցը⁶:

Անգլիացի հայտնի հնագետ Լեյարդը XIX դարի կեսերին, այցելելով Ռնդվան, իր ճանապարհորդական հուշերում գրում է. «Ռնդվանը կոչվում է քաղաք, որովհետև ունի շուկա և համարվում է շրջանի կենտրոնավայրը: Նա ամփոփում է շուրջ 800 կոպիտ կառուցված խրճիթներ և տեղադրված է մեծ գետի ափին, որը 5—6 կմ հեռավորութեան վրա միանում է Դիարբեքիից եկող Տիգրիս գետի ճյուղին: Ռնդվանի բնակիչները եզդիներ են, բացառութեամբ շուրջ 100 հայ, 40—50 յակոբիտյան ու խալդեական ընտանիքների»⁷:

Շեյխ Միրզայի իշխանութիւնը շրջակա հայ և քուրդ ազգաբնակչութեան վրա եղել է անվերապահ, նա այդ մեծ համայնքը ղեկավարել է ժերակույտի միջոցով, որի մեջ հավասար իրավունքով մտել են հայ, եզդի-քուրդ և ասորի ներկայացուցիչները: Լեյարդի վկայութեամբ Շեյխ Միրզան սիրված է եղել ենթակա բազմազգ համայնքի կողմից: Եվ սա հասկանալի է դառնում այն բանից հետո, երբ Լեյարդի մոտ կարդում ենք, որ Շեյխ Միրզան, որպես սիրո և հարգանքի նշան, հպատակ հայ քրիստոնյաների համար Ռնդվանում կառուցել է եկեղեցի: Հիշատակելով այս մասին, Լեյարդը հիացմունքով ավելացնում է, որ այդ «...հաճելի օրինակ է հանդուրժելիութեան ու առատաձեռնութեան, իսկ քաղաքակիրթ մարդկանց համար լրիվ արժանի ընդօրինակման»⁸:

Այն մասին, որ Շեյխ Միրզան մեծ հեղինակութիւն է վայելել անգամ մոտակա շրջանների բնակիչների մեջ, հայկական աղբյուրներից մեկում կարդում ենք հետևյալը. «Յայնմ ժամանակ նստիւր 'ի Սղերդ և 'ի

Ռընդուան իշխան ոմն Եզիդի Միրզը անուն, անկախ իշխանաց Մարացն և ի շեխիցն, որ մարդասիրաբար խնամեր յանձանձեր զամենայն հայս, զասորիս և զԵզիդիս, որք ընդ իւրեան էին, Միրզըք արի էր և ի կամս բարի, վասն այսորիկ բազումք փախուցեալ յանտանելի լծոց ալլոց բռնակալաց, գալին յապաստան յերկիրն Միրզըքու յանդորրու կային և ազատ յուրաքանչյուր կրոնս պաշտեին, որովք բազմացեալ և ամրացեալ լիներ բնակութիւն գաւառացն, ի սփոփանս պատապատելոցն և ի փուշ շրջակայիցն տիրողաց⁹։

Շեխ Միրզան, գիտակցելով ուսման ու լուսավորության կարևորութիւնը, ոչ միայն պայմաններ էր ստեղծում քաղաքում դրանց արմատավորման ու տարածման համար, այլև իր զավակներին ևս տվել էր կրթության հայ ուսուցիչների մոտ։ Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը իր «Եզդիիներ» հոդվածում գրում է, որ Ռնդվանից Երևան եկած մի հայ աբեղա հաստատել է, որ ինքը «...ամիսներ շարունակ հայերեն գրել ու կարդալ է սովորեցրել եզդիների հռչակավոր ցեղապետ Միրզա աղայի երեխաներին Ռոդովանում...»¹⁰։

XIX դարի 20—30-ական թվականներին Քուրդիստանում և Հայաստանում տեղի ունեցած քաղաքական խմորումները, որոնք արդյունք էին Օսմանյան կայսրության տնտեսական և ռազմաքաղաքական հզորության քայքայման, զգալիորեն աշխուժացրեցին հպատակ հայ և քուրդ ժողովուրդների ազատագրական ու հակաթուրքական ընդլզումները։ Սուլթան Սելիմ 3-րդի, սուլթան Մահմուդի ջանքերը՝ կայսրության անկումը ռեֆորմների միջոցով կանխելու ուղղությամբ, շուվեցին նկատելի արդյունքներ։ Քրդական անկախ և կիսանկախ ֆեոդալական իշխանութիւնները, անտեսելով կենտրոնական իշխանության գոյութիւնը, կռիվներ էին մղում միմյանց դեմ։ Այս պայքարում առանձին քրդական էմիրութիւններ այնքան հզորացան, որ աստիճանաբար իրենց պայքարի սուր ծայրը ուղղեցին Օսմանյան կայսրության դեմ՝ ձգտելով թոթափել թուրքական լուծը։ Այսպիսի հզորության էր հասել սորանների էմիրութիւնը Ռևանդուզում՝ Միր Մահմուդի իշխանության ներքո, Բոհտանի էմիրութիւնը Ջեզիրեում՝ Բադրխան-բեկի իշխանության ներքո։

Քուրդ իշխանների քաղաքական պայքարը հանուն անկախության՝ հաճախ ուղեկցվել է մուսուլմանական գաղափարախոսության քարոզչությամբ։ Այդ քարոզչութիւնը առանձին դեպքերում ուղղվել է հարևան ալլադավան ազգաբնակչության դեմ, զգալի շափով թուլացնելով պայքարի ուղղութիւնն ու ազատագրական բնույթը։ Այս պայմաններում քրդական շարժումները ոչ միայն դժվարացնում էին իրենց գլխավոր

նպատակի համար դաշնակիցներ ունենալու խնդիրը, այլև հակառակորդի դիրքում տեսնում էին կիսանկախ կամ անկախ հայ, ասորի և եզդի-բուրդ համայնքներին:

Այդպիսի մի ուժ էր Սղեբդի շրջանի եզդի-քրդերից, հայերից և ասորիներից բաղկացած համայնքը, որին ղեկավարում էր Շեյխ Միրզան: Թուրքական զինարշավները, սուլթանական ռեֆորմները տարիներ շարունակ անդոր էին սասանել այս և հարևան կիսանկախ իշխանությունների դիրքերը: Սակայն Բարձր Դռան համար երանելի հնարավորություն էր ընձեռվել՝ օգտագործել կրոնական մուհեռանդությունը մուսուլման և ալլահավան ազգաբնակչության միջև կոխվներ հրահրելու համար: Հետապնդելով քաղաքական նպատակներ, թուրքական իշխանություններն ավելի են բորբոքում դավանական հակամարտությունները և, առիթից օգտվելով, 1828 թ. մեծ բանակ դուրս բերում Սղեբդի եզդի-բուրդ-հայկական կիսանկախ իշխանության դեմ, զրդելով մուսուլման քրդերին միանալ այդ արշավին:

Թուրքական բանակը և մուսուլմանական ամբոխը, Ռնդվանից ոչ շատ հեռու, կատարյալ պարտություն են կրում իրենցից մի քանի անգամ փոքրաթիվ հայ և եզդի-քրդերի կողմից: Խաչատուր Աբովյանը, հենվելով այս իրադարձություններին իրազեկ մեկի վկայության վրա, գրում է. «Ինչպես պատմում է ականատեսներից մեկը, դեռ նորերս արիության և քաջագործության հրաշքներ են ցույց տվել եզդի ցեղապետ Միրզա աղան և հայ Պողոս քահանան: 1828 թվականին Ռադովան (նույն Ռնդվան, Զ. Զ.) բերդի մոտերքում, Մոսուլից ոչ հեռու, յուրաքանչյուրն իր համայնքով մոտենում է թուրքերից և քրդերից բաղկացած 30000-անոց բանակին և իրենց փոքրաթիվ զորամասով գրեթե ոչնչացնում ամբողջ բանակը, այդ մասին երգվում է քրդական մի երգում...»¹¹:

Եվ իրավ, Խ. Աբովյանը իր հոգվածի վերջում, որպես հավելված թարգմանաբար բերում է այդ երգից մի հատված: Երգը վերնագրված է «Եզդիական ռադմերգ թուրքերի ու քրդերի առաջնորդ Շեյխ Ղասումի դեմ վարած ճակատամարտի մասին»:

Շեյխ Ղասումի մասին բավական խոստով վկայություն պահպանվել է Ա. Լեյարդի ճանապարհորդական ուղեգրություններում, որից մենք տեղեկանում ենք, որ հիշյալ Շեյխը բնակվել է Գոյնա բնակավայրում, Բիթլիսից Զեզիրե ընկած ճանապարհահատվածում և մեծ դեր է խաղացել Շեյխ Միրզային հպատակ համայնքի դեմ ատելություն ու թշնամանք սերմանելու գործում: Եզդիներից նրա կրած խայտառակ պարտության առիթով Լեյարդը գրում է. «Մեր ճանապարհի վրա էր քրդական

Գոյնա մեծ գյուղը, որը պատկանում էր Շեյխ Ղասումին, կրոնական այն ֆանատիկներից մեկին, որոնք Քուրդիստանի գլխին պատիժ էին:

Նա հայտնի էր իր ատելությամբ դեպի եզդիները, որոնց շրջաններում ձեռնարկում էր բազմաթիվ ավերածություններ, սպանելով բոլոր նրանց, ովքեր ընկնում էին նրա ձեռքը: Նրա վերջին արշավանքը հաջողությամբ չպսակվեց, և նա ետ ընկրկեց՝ կորցնելով մեծ թվով հետեւորդներ¹²:

Նրեսուն հազարանոց թուրքական բանակին ու մուսուլման ամրոխին ընդդիմանում են 10000 եզդի, հայ և ասորի աշխարհազորայիներ:

Եզդի-քրդերը այս ճակատամարտում հանդես են եկել Շեյխ Միրզայի, իսկ հայկական ուժերը՝ Տեր Պողոսի ղեկավարությամբ: Ելնելով մահու ու կենաց գոտեմարտի՝ նրանք ոչ միայն դիմակցել, այլև հաղթանակ են տարել իրենցից երեք անգամ գերազանց հակառակորդի դեմ:

Այս հերոսական պայքարի, Տեր Պողոսի քաջագործությունների մասին հայկական աղբյուրներից մեկում կարդում ենք ժամանակակցի հետեւյալ հիշատակությունը. «Եւ իբրւ զարհուրեալք, ափշեալք, տարակուսեալք լինէին և զինչ առնելն անգիտանայն, աչք ամենեցան դարձան հայել յաւազ երէց քահանայն Հայոց 'ի Տեր Պողոս, որ 'ի բանս, յինչս և յարութիւնս նշանաւոր էր 'ի գաւառին, և խորհրդական, օգնական և սիրելի յոյժ յաշս Միրզըքին, զսա անուանեին քրդախոս հայք և եզդիք՝ Քէշէ Պոլէ: Սա յառաչ մատուցեալ անցեալ կացեալ 'ի սարսափառութեանին, բանայր և ցուցանէր նոցա, ասելով, թէ չէ այս կռիւ սովորական վասն մարմնավոր փառաց և իշխանության կամ վրիժու, այլ ընդ ազատութեան անձանց զան և զհավատս մեր բառնալ հանել 'ի մենչ և քանզի եթէ խոյս տամք՝ սատակիմք եթէ զդիմի հարկանիմք՝ մեռանիմք, բայց և մեռացանեմք, և զանում քաջութեան անձանց ժառանգեմք, հապա այնհապաղ, արիք ընդդէմ 'ի ճակատ, և կանայք և մանկտին մեր քաջալիրս կարդասցեն մեզ, և 'ի մէնչ ուսցին զօրինակ քաջութեան ապրելոյ յաղթելոյ, կամ կոտելոյ և մեռանելոյ»¹³:

Տեր Պողոսի հայկական զորքը հիմնականում եղել է հետեւակ՝ ղինված հրացաններով, սուսերով ու ասպարներով, իսկ Շեյխ Միրզայի եզդի-քրդականը եղել է հեծելազոր, զինված տեզերով:

Այս ճակատամարտի շնորհիվ «Մեծացավ իշխանութիւն Միրզըքին, մեծարեցավ անուն Տեր Պողոսին,—գրում է այս անցքերի ժամանակակիցը,—և համբավ կենաց նորին զարհուրեցուցաներ զՄարս՝ մինչև ցօր մահվան նորա»¹⁴:

Հաղթանակի խանդավառութիւնը դեռ չէր թուլացել, երբ սկսվեց ոռոս-թուրքական պատերազմը: Պատերազմը նոր հույս էր ներշնչում Շեյխ Միրզային հպատակ ժողովրդին: Ազատագրութեան հույսերը ավելի ունայն դառնում այն բանից հետո, երբ ռուսական զորքը 1828 թ. աշնանը Բայազետի փաշայութիւնում Փաթնոսի տակ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերի դեմ հաղթանակ է տանում: Ոգևորված այս լուրից, Շեյխ Միրզան երկու բանագնաց է ուղարկում գնեհրալ Պասկելիչի մոտ, վերջինիս առաջարկելով իր օգնութիւնը: Սակայն երկու բանագնացներն էլ ճանապարհին ընկնում են թուրքերի ձեռքը և զոհվում:

Տեղեկանալով այդ մասին, Շեյխ Միրզան ոմն Կիրակոս Առաքելովի ուղարկում է ռուսական բանակ՝ հրամանատարի հետ հանդիպելու: Նամակաբերը էրզրում է հասնում 1829 թ. հունվարի սկզբներին և Պասկելիչի բացակայութեան պատճառով հանդիպում է գնեհրալ Պանկրատեի հետ:

Մեզ հաջողվել է Լենինգրադի պատմական արխիվում հայտնաբերել գնեհրալ Պանկրատեի՝ 12-ը հունվարի 1829 թվականի զեկույցը գնեհրալ Պասկելիչին՝ Շեյխ Միրզայի բանագնացի հետ իր հանդիպման մասին: Նա գրում է. «Օրերս ինձ մոտ եկավ Ռոդովան բերդի հայ բնակիչ Դրեքոսը: Ռոդովանը գտնվում է Սղերդից հարավ Հազոյի շրջանից կեսօրյա ճանապարհի հեռավորութեամբ, Տիգրիս գետից ոչ շատ հեռու: Նա ինձ էր բերում Ռոդովանի իշխան եզդի Միրզա-աղայի և հայ վանահայր Հովհաննեսի գրած նամակը, որը թուրքերը խլել էին նրանից Բիթլիսում: Հիշյալ Դրեքոսը հաղորդեց հետևյալը. Միրզա-աղան, ինչպես և բոլոր եզդիներն ու հայերը հույժ ուրախ են, որ ռուսական զորքը գրավել է Բայազետի փաշայութիւնը, և ասում են, եթե ռուսները շարունակեն շարժվել առաջ, ապա իրենք կժառայեն նրանց մեծ եռանդով: Միրզա-աղան իր իշխանութեան ներքո ունի երկու հազարից ավել եզդի ընտանիքներ և նույն քանակութեամբ էլ հայեր: Նա կարող է մարտի դաշտ հանել երեք հազար հետևակ և յոթ հարյուր հեծյալներ: Սղերդ քաղաքը ղեկավարում է Թադի-աղան, որը գտնվում է ռոդովանցի Միրզա աղայի ազդեցութեան տակ: Երկու տարի առաջ թուրքական կառավարութիւնը փոխել է Դիարբեքիրի փաշային և այդ ժամանակվանից Դիարբեքիրի բոլոր ինքնուրույն իշխանները ոչ մեկին չեն ենթարկվում»¹⁵:

Գնեհրալ-մայոր Պանկրատեի Կիրակոսի միջոցով Շեյխ Միրզային ուղարկում է հատուկ նամակ՝ գրված ռուսերեն: Նամակը անմնաս հասցեվում է հասցեատիրոջը, սակայն այն մնում է անընթեռնելի, քանի որ Շեյխ Միրզայի մերձավորներից ոչ մեկը ռուսերեն չգիտեր: Այսուհան-

դերձ Կիրակոս Առաքելովը շնչխին հաղորդում է գեներալի սիրալիր ընդունելության և Միրզայի առաջարկությունների նկատմամբ ուսական բանակի հրամանատարության քարյացակամ վերաբերմունքի մասին:

Շնչխ Միրզան ձգտում էր անցնել անմիջական գործողությունների, դրանք համաձայնեցնելով ուսական բանակի ռազմական գործողությունների հետ: Զգոհանալով Կիրակոս Առաքելովի տեղեկություններով, նա պատրաստվում է գեներալ Պասկևիչի մոտ ուղարկել նոր բանազրնացներ:

Իր երրորդ նամակը Շնչխ Միրզան ուղարկում է երկու հայ վստահելի մարդկանց՝ նույն Կիրակոս Առաքելովի և Ռեզվան քաղաքի հայ ուսուցիչ Պետրոս Խազարովի միջոցով:

Նամակը գրված է 1830 թ. մայիսին, այսինքն այն ժամանակ, երբ արդեն Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմը վաղուց դադարել էր, իսկ 1829 թ. սեպտեմբերի 14-ին կնքվել Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը: Բանագնացները էրզրում են հասնում բարեհաջող և այստեղ էլ իմանում են պատերազմի ավարտի մասին: Այնուհանդերձ Շնչխ Միրզայի նամակը հասցեատիրոջը՝ գեներալ Պասկևիչին հանձնելու համար նրանք ուղևորվում են Թիֆլիս: Պասկևիչը այդ ժամանակ Պետերբուրգում էր: Մինչև Պասկևիչի վերադարձը Կիրակոս Առաքելովը և Պետրոս Խազարովը մնում են Թիֆլիսում, և պետք է ենթադրել, որ կապեր հաստատում տեղի հայ հոգևոր դասի և մտավորականության ներկայացուցիչների հետ: Կիրակոս Առաքելովը շուտով ժանտախտից մահանում է, իսկ Պետրոս Խազարովը մինչև դեկտեմբեր մնում է Թիֆլիսում՝ սպասելով Պասկևիչի վերադարձին:

Պասկևիչի վերադարձից հետո, Պետրոս Խազարովը 1830 թ. դեկտեմբերի 17 թվակիր մի գրությամբ դիմում է Կովկասի փոխարքային, շարադրելով իր առաքելության նպատակը, կից ներկայացնում Շնչխ Միրզայի նամակը՝ գրված հայերեն: Պետրոս Խազարովի դիմումը շարադրված է ուսերեն, հավանաբար փոխարքայի գերատեսչության կամ Թիֆլիսի հայ մտավորականության ներկայացուցիչների օգնությամբ: Այստեղ Խազարովը հակիրճ շարադրում է այն հարցերը, որոնք կազմում էին Շնչխ Միրզայի նամակի հիմնական բովանդակությունը և խնդրում տալ պատասխան:

Շնչխ Միրզայի նամակը, ինչպես նշվեց, գրված էր հայերեն, երկուստեք վերից ու վարից կնքված Շնչխի անձնական կնիքով: Ստորև բերում ենք այդ նամակի տեքստը՝ ռի յաստոժյ ծառայ Միրզայ աղան,

Handwritten text at the top of the page, possibly a title or header, written in a cursive script.

Main body of handwritten text, consisting of several lines of cursive script. The text is dense and fills most of the page.

այսինքն Ընտովանցի շատ բարև և սիրոյ ողջուն մատուցանէմ առ գէ-
րագանց և քաջամարտիկ զինավորն Քրիստոսի տեառն մեծայաղթող
Պազըսովիչին ժամանէսցէ ՚ի ժամ բերկրութեան և ուրախութեան ամեն:

Արդ զկնի սիրոյ և ողջունի, ահա յայտ լիցի քեզ անծանօթ և անտես
սիրելի իմ Պազըսովիչ պարծանք օգնական իմ քանզի ես էզիտի եմ և
ունիմ փոքր ազգ մի, ունիմ Ռեժ ձիաւոր, ունիմ ՆՌ սալտատ, իրաւի
փոքր ազգ ունիմ, լման գիտացիր, դարձեալ ես այնօր որ լսեր եմ ըզձայն
գալստեան քո, որ եկեալ էիր ի Փաթնոս մինչև այժմ ես գիր և էլլի կու-
ղարկեմ առ քեզ, դեռևս ոչ գիր և ոչ խօսք մի չեմ իմացեր եմ: Այ՛ն տա-
րի որ քո զօրք և ասգար մտան ի Փաթնոս և ես իմ երկիր և հասարակ
էզիտիք և քրիստոնեայք միատեղ յոյժ ուրախացան վասն քո գալստեան
այս Գ անգամ գիր և էլլի կուղարկեմ առ քեզ. առաջի էլլիք չի հասան առ
քեզ, ճանապարհաւ սրանեցին զնոսա տաճկեր, ոչ գիտեմ զինչ եղէ
նոցա, երկրորդ անգամ ես որ իմացայ ըզ սրանութիւն նոցա դար-
ձեալ զայս մարդ որ անուն Կիրակոս է յետին անգամ դարձեալ նույն
ինքն է, նա ևս եկաւ ի Պազիտ առ եներալ և ասգարի յետ եկաւ Ղարս.
ի Ղարսու ընդ քո զօրք եկեալ էր Արզրում ի Արզուրում որ դուք միատեղ
ժողովեցաք Աստծոյ կարողութեամբ որ առաք զքաղաք, դարձեալ այսու-
յետե, իմ էլլի ոչ լեզու գիտեր և ճանաչող ևս ոչ ուներ ի քաղաք, որ
զպատգամս առ հրամանոց բերեր ըզ կնի յետև քո ասգարի մէջ մէծ
եներալ մի կայր որ ամենեցուն երանելիաց գովելի գլուխ այն էր և դար-
ձեալ իմ պատգամաբեր առ այն եներալին կեյթայ և զպատգամս իմոյ
գուշացուցանե նմա, նա ևս փոխանակ պատգամաց իմոց մեկ գիր մի
կուտայ իմ էլլին և կուգայ, երբ որ եկավ ի առիս և բացի ձեր գիր և
զձեր մօրհ, յոյժ ուրախացայ, սորա կոչեցի զտերտեր չկարացին կար-
դան և ևս ամենեկին չըշահեցայ գրով. դարձեալ այս երրորդ յետին ան-
գամ Բ մարդ քրիստոնեայ ա Կիրակոս, ա մը Պետրոս առաքեցայ և սե-
պեցի առ տերութեանդ արդ ահա յայտ լիցի քեզ ով փառք իմ, ով պար-
ծանք իմ, քանզի իրավի փոքր եմ ազգավ, բայց շատ մեծ համարիմ ի
աշս օսմանցոց և կարողությամբն աստծոյ ճ ձիավոր իմ ազգին ունին
կարողություն ի վերայ Գձ ձիավոր օսմանցոց ազգեն, և ազգեն օսման-
ցոց զիս միշտ տուշման գիտեն չմքի որ այս այսպես է և լման եման
իմացիր զխորհուրդ սրտի իմոյ, քանզի դու դարձեալ իմ մեծ արքայէս,
և ես քո ծառայ, դարձեալ Ռ երանի որ ձայն գալստեան քո գայ ի Բաղէշ,
որ է Բիթլիս, և կամ իմ էլլիք դառնան և ասեն թէ եկավ, այնուհետև
դու թամաշա արա քո ծառային, դու մեծ ուռուս և ես իբր ա եներալ մի

ևս ունեւմ գլուխ մի, այն գլուխ քեզի մատաղ կենիմ և ամենայն ազգ իմ նոյնպէս ի ողջ լերուք սիրոյ և տեառն...

արարչեն ամին

Դարձեալ շատ կաղաչեմ զքեզ վասն սիրոյ իմոյ ա դեղ մի առաքես յետ էլլիպաց իմոց վասն աշաց որդոյ իմոյ դարձեալ գրեց առ գիրս այս մահիսի ի՞նչ թվին, ՌՄՇ թվին»¹⁶:

Այս նամակը Շեյխ Միրզան Պ. հազարովին թելադրել է քրդերեն, իսկ վերջինս՝ շարադրել հայերեն: Այդ է վկայում նամակի ձեռագրի և Պետրոս հազարովի ռուսերեն խնդրագրի տակ հայերեն ստորագրութեան ձեռագրերի նույնութիւնը:

Պասկելիչը բարեկամորեն ընդունելով Շեյխ Միրզայի նամակը, առանց մեծ հապաղման, մեկ ամսվա ընթացքում շեյխի բանագնացի հետ ուղարկում է նրա խնդրած դեղը տղայի աչքի համար և թանկարժեք նըվերներ¹⁷:

Ռուսաստանի Կովկասյան հոդերով անարգել անցնելու համար հազարովին Ռիֆլիսում տրվում է վկայական՝ հետևյալ բովանդակութեամբ. «Պարոն գեներալ Ֆելդմարշալ Կոմս Պասկելիչ Երևանյանի դիվանագիտական գրասենյակը վկայում է առ այն, որ սույնը ներկայացնող Ռեզվանցի ուսուցիչ Պետրոս հազարովը նորին պայծառափայլութեան կողմից նվերով, բաղկացած խալաթից և դեղից մեկնում է եզդի Միրզա աղայի մոտ: 30 հունվարի 1831 թ.»¹⁸:

Մեր ձեռքի տակ շունենք որևէ հիշատակութիւն կամ վկայութիւն Պասկելիչի կողմից Միրզա աղային գրավոր պատասխան ուղարկելու մասին: Ի նկատի ունենալով քաղաքական փոխհարաբերութիւնների նոր իրավիճակը, երբ Թուրքիայի և Ռուսաստանի միջև կնքվել էր հաշտութեան պայմանագիր, կարելի է ենթադրել, որ Պասկելիչը խուսափել է Միրզայի աղային որևէ գրավոր փաստաթուղթ ուղարկել, որպեսզի այն չընկնի թուրքական իշխանութիւնների ձեռքը:

Այսպիսով, փաստորեն չիրականացան Շեյխ Միրզայի, նրա հետ և Սղերդի հայ, քուրդ և ասորի ազգաբնակչութեան փայտաշած փրկութեան հույսերը: Ռուս-թուրքական պատերազմում կրած ծանր պարտութիւնից հետո թուրքական իշխանութիւնները երկրի արևելյան նահանգներում իրենց ազդեցութիւնը ուժեղացնելու նպատակով 1833—1834 թթ. Ռաշիդ փաշայի, այնուհետև Հաֆիզ փաշայի ղեկավարութեամբ ձեռնարկեցին ռազմական մեծ արշավ դեպի Հայաստան և Քուրդիստան, որի ընթացքում հրի ու սրի միջոցով կարողացան հպատակեցնել մի շարք քրդ-

դական և հայկական կիսանկախ հզոր իշխանություններ, անկախ համայնքներ¹⁹:

Ժամանակակիցների վկայությամբ Ռաշիդ փաշայի գլխավորած թուրքական զորարանակը բաղկացած էր 40000 զինվորից: Քուրդիստանը և Հայաստանը հնազանդեցնելու գործողությունների առաջին փուլը տևեց 1833-ից մինչև 1836 թ. աշունը: Լեյաբդը նշում է. «...երբ հռչակվոր Ռաշիդ փաշան հնազանդեցրեց հյուսիսային Քուրդիստանը և շարժվեց դեպի հարավ, Միրզա աղան սարսափեց սուլթանական բանակի մոտեցումից և համաձայնվեց ընդունել թուրք գալմագամին իր դրդյակում»²⁰:

Խ. Աբովյանը հենվելով իր ունեցած լուրերի վրա, նշում է. «Վերջապես 1833 թ. հաջողվում է Ռաշիդ փաշային ինչպես նրանց, այնպես էլ քրդական շատ ցեղեր թուրքական իշխանությանը ենթարկել»²¹:

Թուրքական իշխանությունները տեղյակ լինելով Շեյխի ռուսասիրական տրամադրությունների, հավանաբար և նրանց միջև ստեղծված կապի մասին, վերհիշելով նաև իրենց կրած ամոթալի պարտությունը Ռընդվանի տակ, որոշում են վրեժխնդիր լինել եզդի իշխանից:

Ռնդվանի թուրք գալմագամը՝ էմին փաշան, հյուրընկալվելով Շեյխի տանը, խախտելով արևելյան հյուրընկալության բոլոր օրենքները՝ առևանգում է նրա գեղեցիկ կնոջը: Անվերապահ հատուցումից խուսափելու հաից էմին փաշան թողնում է իր նստավայրը և պատասպարվում Դիարբեքիրում, Ռաշիդ փաշայի մոտ:

Շեյխ Միրզան դիմում է խորամանկության՝ Ռաշիդ փաշային հավաստիացնում է, որ էմին փաշան ոչ թե իր կնոջն է առևանգել, այլ իր տան սպասուհիներից մեկին, հետևաբար նա կարող է առանց երկյուղի վերադառնալ իր նստավայրը: էմին փաշան խաբվելով շեյխի հավաստիացումներից, իր ենթականերով գալիս է Ռնդվան և ընկնում որոգայթը՝ սպանվում Շեյխ Միրզայի կողմից:

Ռաշիդ փաշան լսելով այս մասին, Դիարբեքիրից զորքով շարժվում է Ռնդվանի վրա: Սակայն առավել հույժ իրադարձությունները՝ կապված Ռևանդուզի քուրդ իշխան Միր Մահմուդին իրեն ենթարկելու խընդրի հետ, առժամանակ հետաձգում է այդ արշավանքը:

1836 թ. աշնանը Ռաշիդ փաշան հաղթանակ տանելով Սորանի ապստամբ էմիրի՝ Միր Մահմուդի դեմ, Դիարբեքիր վերադառնալու ճանապարհին մտադրվում է պատժել Շեյխ Միրզային: Սակայն վերջինիս կողմից թուրքական իշխանության անվերապահ ճանաչումը կանխում է արյունահեղությունը: Ռաշիդ փաշան հաշվի առնելով Շեյխ Միրզայի

ազդեցութիւնը շրջանի ազգարնակչութեան վրա, իր հերթին ճանաչում է նրա ժառանգական իրավունքները հպատակ համայնքի վրա: Սակայն շուտով, մի քանի ամիս անց, 1837 թ. հունվարին Դիարբեքիրում ժանտախտից մահանում է Ռաշիդ փաշան: Փաշայի թաղմանը և նոր վալի նշանակելու արարողութեանը մասնակցելու համար Դիարբեքիր հրավիրված բոլոր մեծամեծների թվում է լինում և Շեյխ Միրզան: Սակայն նոր նշանակված վալին մտադիր էր այդ հրավերը օգտագործել Շեյխին դավադրաբար սպանելու համար: Շեյխ Միրզան Դիարբեքիրի պալատում նոր նշանակված վալու կազմակերպած ընդունելութեան ժամանակ նենգաբար սպանվում է:

Շեյխի կինը, որ էմին փաշայի սպանութեանից հետո տարվել էր Դիարբեքիր՝ Ռաշիդ փաշայի պալատը, լսելով իր սիրելի ամուսնու սպանութեան լուրը, վերջ է տալիս իր կյանքին: Շեյխին ուղեկցող զինավառ խումբը, խիզախաբար մարտնչելով, կարողանում է իշխանի աճյունը դուրս բերել թշնամու ճանկերից, հասցնել Ռնդվան և պատվով հողին հանձնել քաղաքի արևմտյան կողմում, գետի բարձրադիր ափին:

Շեյխ Միրզայի սպանութեանից հետո, նրա զավակների անշահա-հաս լինելու պատճառով, համայնքի ղեկավարութիւնը անցնում է նրա բարեկամին՝ Նազիրին: Վերջինս չկարողանալով պահպանել իր դիրքերը և հալածվելով թուրքական իշխանութիւնների «կողմից» լքում է Շեյխի ամրոցը և իր խղճով գոյութիւնը քարշ տալիս մենութեան մեջ²²:

Թուրքերը անպաշտպան գտնելով Շեյխի երբեմնի անառիկ ամրոցը, այն ավերում են և վերածում փլատակների: Դրանով փաստորեն վերջ է տրվում Սղերդի կիսանկախ իշխանութեանը:

Տեղի բնակչութեան նկատմամբ սկսվում են թուրքական իշխանութիւնների և շրջակա խաթամուժի մշտական հալածանքները: Եզդի-քրդերի համայնքի մի մասը հալածանքներից խուսափելով, ստիպված թողնում է իր պապենական հողերը և բռնում գաղթի ճանապարհը: Գաղթականների զգալի մասը շարժվելով հյուսիս, գալիս և ապաստանում է Ռուսաստանին հպատակ Հայաստանի տարածքում:

Թիֆլիսում լույս տեսնող ռուսերեն «Կովկաս» թերթը 1848 թ. առանձին հոդված նվիրելով եզդիներին, համակրանքով և կարեկցանքով գրում է. «Օսմանյան կայսրութեանը վերջապես հաջողվեց խորտակել այդ ցեղերի, մանավանդ՝ քրդերի և եզդիների անկախութիւնը, որոնց մի մասը բնաջնջվեց, ցիր ու ցան եղավ, իսկ մյուս մասը հնազանդվեց թուրքական իշխանութեանը: Վերջիններին վիճակվեց ավելի սոսկալի ճակատագիր, որովհետև ստիպված եղան հրաժարվելու իրենց հավա-

տից: «...բազմաթիվ զինվորներ կնքեցին իրենց մահկանացուն՝ նահատակվելով հայրերի հավատի համար, մյուսներն ստիպված եղան մահմեդականություն ընդունել, և դրա համար ազատություն ստացան: Միայն քչերը փրկվեցին, փախչելով Պարսկաստան, Թուրքիայից դեպի հյուսիս-արևելք գտնվող երկրները և ռուսական Հայաստան, որտեղ նրանք Ռուսաստանի օրհնյալ օրենքների ներքո վայելում են կատարյալ բարօրություն՝ միանգամայն ազատորեն դավանելով իրենց կրոնը»²³:

* * *

Շեյխ Միրզայի, նրա զինակիցների կերպարները, ինչպես նաև այդ տարիների Սղերդի շրջանի եզդի-քրդերի, հայերի և ասորիների հերոսական պատմությունը խոր հետք է թողել ժողովրդական դանգվածների հիշողության մեջ: Անմահ հերոսների մասին հյուսվել են երգեր, պատմվել սերնդե-սերունդ և այժմ քրդական, հայկական և ասորական ժողովրդական բանահյուսության հարուստ գանձարանում, որպես ստեղծագործական գոհարներ հանդիպում ենք բազմաթիվ երգերի ու զրույցների, որոնք անցած հերոսամարտերի ու հերոսների սխրանքներին նվիրված վառ կոթողներ են:

Պատմական այս անցքերից մի քանի տարի անց, Խ. Աբովյանը Սղերդից Կովկաս եկած ականատեսներից մեկի հետ զրուցելիս, տեղեկանում է, որ Շեյխ Միրզայի և նրա զինակից քահանա Պողոսի հերոսական ճակատամարտի մասին երգվում է ժողովրդի մեջ: Հայ մեծ լուսավորիչը այդ երգը գրի է առել և թարգմանաբար կցել իր «Եզդիներ» հոդվածին²⁴: Մի քանի տարի անց՝ 1852 թ. Տրապիզոնից բանասեր Պողոս Թովմասեանցը Մշո Սուրբ Առաքելոց վանքում Սասունի Քաջարան գյուղից եկած ծերունազարդ Սիմեոն Վարդապետից գրի է առնում հայկական ժողովրդական զրույց Քեշիշ-Պոլոյի (քահանա Պողոսի) և Եզդի Միրզեի (Շեյխ Միրզայի) ղեկավարած հակաթուրքական պայքարի մասին: Հետագայում այդ զրույցը հայ ճանաչված բանահավաք Գ. Սրվանձըտյանցը ղեկեղում է իր «Հնոց և նորոց» ժողովածուում²⁵: 1869 թ. Դամասկոսում՝ ի թիվս ասորական բազմաթիվ բանահյուսական ստեղծագործությունների, գերմանացի արևելագետներ Էռզեն Պրիմս ու Ալբերտ Սոցինը ասորի բանասաց Ջանոյից գրի են առնում «Օղե և Ամշե» զրույցը՝ նվիրված Շեյխ Միրզայի ողբերգական պատմությանը²⁶:

Շեյխ Միրզայի և նրա հետ կապված մյուս պատմական անձերի մասին հյուսված երգերն ու զրույցները լայնորեն պատմվել ու երգվել են

եզդի-բրդերի մեջ, հատկապես Արևելյան Հայաստանի գաղթածների կողմից²⁷։ Դրանք երբեմնի հերոսական անցյալի խոստովանություններ են։ Բանահյուսական նյութերի ուսումնասիրությունն ու համադրությունը, անշուշտ, կօգնի բացահայտելու հայ և քուրդ ժողովուրդների պատմամշակութային առնչությունների մի արժեքավոր էջ։

ДЖАЛИЛЕ ДЖАЛИЛ

СТРАНИЦА ИЗ АРМЯНО-КУРДСКИХ ИСТОРИЧЕСКИХ И КУЛЬТУРНЫХ ВЗАИМОСВЯЗЕЙ

Резюме

XIX век богат многими интересными событиями, свидетельствующими о глубоких корнях историко-культурных взаимосвязей двух соседних народов Ближнего Востока,—армян и курдов.

Политические события первой половины XIX века в районе Сирта— яркое проявление общности интересов двух народов. Исследование событий данного периода на основе архивных материалов и привлечения разноязычной литературы позволило восстановить отдельные стороны жизни и деятельности Шейха Мирзы, наследного князя города Родована, которые легли в основу цикла песен и преданий, сложенных сказителями на курдском, армянском и ассирийском языках.

ՅԱՆՈՒԱԳՐՈՒՅՈՒՆՆԵՐ

1. ЦГИА ГССР, ф. 11, д. 66.
2. Акты, собранные Кавказской археологической комиссией, т. VII, с. 957.
3. Аверьянов П. И. Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис, 1900, с. 10—12.
4. Շեյխ Միրզայի մասին հյուսիսի երգերի կապակցությամբ տպագրվել է առանձին հոդված (տե՛ս Դջալիլե Դջալիլ, Героические песни курдов-езидов о событиях, связанных с переселением их предков в Россию в 30-х годах XIX века. Сб. „Иранская филология“, Л., 1964, с. 130—143).
5. Cuinet Vital, La Turquie DAsie..., Paris, 1891, t. 2, p. 606.
6. Նույն տեղում, էջ 607։
7. A. H. Layard, Discoveries in the ruins of Nineveh. v. 1, p. 45.
8. Նույն տեղում։
9. Գ. Վ. Սրուսեմեաեց, Հնոց և նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 171—172։
10. Խ. Արովյան, Երկերի լրակատար ժողովածու, հ. 8, Ե., 1958, էջ 267։

11. Նույն տեղում, էջ 260:
12. A. H. Layard, Discoveries in the ruins..., p. 38.
13. Գ. Վ. Սրուանձտեանց, Հնոց և նորոց, էջ 174—175:
14. Նույն տեղում, էջ 184:
15. ЦГИАЛ, ф. 1018, оп. 3, л. 104, л. 1—1 об.
16. ЦГИА СССР, ф. 11, д. 66, л. 2.
17. Պետրոս Խաչարովի ռուսերեն խեղրագրի տակ մեկ այլ ձեռագրով ավելացված է.
 „Халат состоящий из красного сукна и парчи и двд ать пять“ «рвонцев
 выданы Петросу Хазарову, равно и глазное лекарство 28 января, 1831.»
 ЦГИА СССР, ф. 11, д. 66, л. 5.
18. ЦГИА СССР, ф. 11, д. 66, л. 5.
19. Այդ մասին մանրամասն տե՛ս *Джалил Джалил*, Курды Османской империи
 в первой половине XIX в., М., 1973.
20. A. H. Layard, Discoveries in the ruins..., p. 45.
21. Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 260:
22. A. H. Layard, Discoveries in the ruins..., p. 45.
23. «Кавказ», 1848, № 8, 21 февраля, с. 31.
 Հմուտ արքվյանագետ Պ. Հակոբյանը հոգվածի բովանդակության և լեզվաաճական
 առանձնահատկությունների բնությամբ հաստատում է, որ այն գրված է Խ. Արով-
 յանի կողմից: Այդ իսկ պատճառով սույն հոգվածը ռուսերեն բնագրով և հայերեն
 թարգմանությամբ զետեղվել է Խ. Արովյանի երկերի լիակատար ժողովածուի VIII
 հատորում: Մեջբերումը կատարված է ըստ VIII հատորի հայերեն թարգմանության
 (տե՛ս Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 405—406):
24. Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 281—282:
25. Գ. Վ. Սրուանձտեանց, Հնոց և նորոց, էջ 166—184:
26. Eugen Prym, Albert Socin, Kurdische Sammlungen. Erste Abteilung, Erzäh-
 lungen und Liedes im Dialekte des Tur Abdin. SPb, 1887, s. 57—61. Օր
 Ахикара до Джано, М.—Л., 1960, с. 361—366.
27. Այս երգերի ու զրույցների քրդերեն առաջին գրառումները կատարվել են Սովե-
 տական Հայաստանի և Վրաստանի տարածքում ապրող եզդի-քրդերից: Առաջին տար-
 րերակները հրատարակվել են հետևյալ ժողովածուներում՝ Ордихане Щәлид
 Стране шьмә'та к'ордайә т'аригне, Ереван, 1975, p. 41—51; Zargotina kurda
 M., 1978, с. 2, ru 256—259.